

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱՂՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ  
ԾՐԱԳԻՐ

Հաստատում եմ

Ռեկտոր

Ն.Սարիբեկյան

« 07 »

2018



Մասնագիտությունը 091201, Բուժական գործ

Առարկա Բուժքրոջ օգնական

Ֆակուլտետ Բուժական կուրս II կիսամյակ IV

Պրակտիկայի ժամաքանակը 90 ժամ

## **ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

### **Նպատակներն են՝**

- ուսանողներին ծանոթացնել բուժպրոֆիլակտիկ հիմնարկի աշխատանքներին,
- ուսուցանել բուժքրոջ աշխատանքի հիմնական էտապները,
- դեռնտոլոգիայի և էթիկայի կանոնների պահպանման դաստիարակում:

### **Խնդիրներն են՝**

1. ծանոթացում բազմապրոֆիլ բժշկական հիմնարկի կառուցվածքին և աշխատանքի կազմակերպմանը,
2. ծանոթացում թերապևտիկ պրոֆիլի բաժնի աշխտորոշիչ և բուժական կաբինետների, ընդունարանի, ներհիվանդանոցային դեղատան աշխատանքին,
3. նշանակման թերթիկների ձևակերպման, դեղորայքի դուրսգրման, ստացման, պահպանման և բաժանման կանոնների ուսուցանում,
4. ծանր հիվանդների խնամքի հմտությունների ձեռքբերում (մաշկի խնամք և պառկելախոցերի կանխարգելում, հիվանդի անձնական և անկողնու սպիտակեղենի փոխում, պետքանոթ և մեզրնդունիչ տալը, օգնություն սնունդ ընդունելիս),
5. հիվանդի հսկողության հիմնական հմտությունների յուրացում (գիտակցության գնահատում, պուլսի հետազոտում, ՋՃ-ի չափում, ջերմաչափում),
6. հետևյալ մանիպուլյացիաների անցկացման պրակտիկ հմտությունների կիրառում (թթվածնաբուժություն, բանկաների, մանանեխի ծեփուկների, ջեռակների, կոմպրեսների դնում, մաքրող հոգնա, ստամոքսի լվացում, ինչպես նաև աչքի քթի, ականջի կաթիլների կաթեցում, դեղորայքային ձևերի բաժանում հիվանդներին),
7. ծանոթացում բուժական հիմնարկում սանլուսաաշխատանքի բնույթին:

### **Պրակտիկայի ավարտին ուսանողը պետք է՝**

#### **Իմանա**

- բուժքրոջ աշխատանքի հիմնական էտապները,
- բուժքրոջ անձնական հիգիենայի և հագուստի նկատմամբ պահանջները,
- ձեռքերի լվացման մակարդակները,
- հիվանդի դիրքի և տեղափոխման ձևերը,
- պառկելախոցերի ձևավորման ռիսկի գործոնները և շրջանները,
- կեղտոտ սպիտակեղենի հավաքման և տեղափոխման կանոնները,
- թթվածնաբուժության նպատակը և մեթոդները,
- տենդ, տեսակները, շրջանները,
- բալանսավորված և ռացիոնալ սննդի հիմնական սկզբույթները,
- հիմնական բուժական սեղանների բնութագիրը,
- ստացիոնարում հիվանդների սնուցման կազմակերպումը,
- հոգնաների տեսակները,

- գագահան խողովակի դրման, կաթետերիզաացիայի ցուցումները, հակացուցումները, հնարավոր բարդությունները,
- կենսաբանական նյութերի հետ աշխատելիս անվտանգության տեխնիկան,
- տարբեր տարիքային խմբերի հիվանդների մոտ դժբախտ դեպքերի ծագման ռիսկի գործոնները,
- բուժքրոջ աշխատանքում ռիսկի գործոնները (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական, հոգեբանական),
- բուժկանխարգելիչ հիմնարկի բաժանմունքում դեղորայքային միջոցների դուրսգրման և ստացման կանոնները,
- նարկոտիկ, ուժեղ ազդող և թանկարժեք դեղորայքի հաշվառման և պահպանման կանոնները,
- հոսպիսի պայմաններում հիվանդների սպասարկման սկզբունքները,
- իմանալ մեռնող մարդու, նրա ընտանիքի և հարազատների պահանջները:

### **Կարողանա**

- աշխատել ընդունվող հիվանդների փաստաթղթերի հետ,
- հստակ և ժամանակին վարել փաստաթղթերը,
- կատարել անթրոպոմետրիա,
- հիվանդի սանիտարական մշակում, ջերմաչափում, լրացնել ջերմության թերթիկը,
- պատրաստել հիվանդի անկողինը, փոխել ծանր հիվանդի անկողինը, մշակել բերանի, քթի խոռոչները, ականջները,
- խնամել հիվանդի եղունգները, մազերը, մաշկը,
- ցուցաբերել օգնություն անմիզապահության, ակամա կղազատման դեպքում,
- օգտվել ֆունկցիոնալ մահճակալից և հիվանդին հարմար դիրք տալու համար նախատեսված այլ հարմարանքներից,
- որոշել պուլսը, շնչառական շարժումների հաճախականությունը և այլն,
- կատարել պարզագույն ֆիզիոթերապևտիկ մանիպուլյացիաներ (բանկաներ, մանանեխի ծեփուկներ, ջեռակներ, կոմպրեսներ, սառցեպարկեր),
- լաբորատոր քննության համար հավաքել մեզը, կղանքը, խորխը, դրանք ուղարկել լաբորատորիա,
- հավաքել սարք մաքրող և սիֆոնային հոգնա կատարելու համար,
- ցուցաբերել առաջին օգնություն փսխում, սրտի շրջանի ցավեր ունեցող հիվանդներին,
- ցուցաբերել օգնություն գրգռված հիվանդներին,
- հսկել հիվանդին՝ վիճակը հետևող սարքավորումի տվյալներով,
- անցկացնել հիվանդի լրիվ և մասնակի սանիտարական մշակում,
- գննել հիվանդին պեդիկուլոզի (ոջլոտության) հայտնաբերման նպատակով, կազմակերպել համապատասխան հակահամաճարակային միջոցառումներ, օգտվել հակապեդիկուլոզային սանրվածքից,
- ձևակերպել «Ստացիոնար հիվանդի բժշկական քարտի» տիտղոսաթերթը,

- հիվանդին գրանցել հաշվառման և հոսափտալացումից հրաժարվելու մատյանում,
- հիվանդին տեղափոխել բուժհիմնարկ,
- կիրառել պաշտպանիչ հագուստ պրակտիկ գործունեության ընթացքում,
- մշակել ձեռքերը մանիպուլյացիայից առաջ և հետո,
- մշակել ձեռքերը և լորձաթաղանթները կենսաբանական հեղուկների հետ շփվելու դեպքում,
- պատրաստել տարբեր կոնցենտրացիաների, դեզինֆեկցող լուծույթներ,
- ցուցաբերել առաջին օգնություն՝ դեզինֆեկցող լուծույթի մաշկին և լորձաթաղանթներին ընկնելու դեպքում,
- իրականացնել հիվանդի խնամքի պարագաների, սպիտակեղենի, գործիքների դեզինֆեկցիա,
- դեզինֆեկցող միջոցներով անցկացնել բուժկանխարգելիչ հիմնարկների խոնավ մաքրում,
- իրականացնել շենքերի օդափոխում և կվարցավորում,
- անցկացնել հիվանդասենյակների, պահարանների, սառնարանների սանիտարական վիճակի հսկում,
- իրականացնել հիվանդների անվտանգ տեղափոխում,
- օգտվել ֆուկցիոնալ մահճակալից,
- օգնել հիվանդին փոխել դիրքը անկողնում,
- կիրառել ջեռակ, սառցեպարկ, մանանեխի ծեփուկներ, բանկաներ,
- դնել տաքացնող, տաք և սառը թրջոցներ,
- անութափոսում չափել ջերմաստիճանը և գրանցել տվյալները,
- անցկացնել ջերմաչափի դեզինֆեկցիա և ճիշտ պահել դրանք,
- կախված տենդի շրջանից՝ հիվանդին ցուցաբերել օգնություն,
- կերակրել ծանր հիվանդին,
- խնամել մշտական կաթետրով հիվանդին,
- ցուցաբերել օգնություն փսխման ժամանակ,
- լվանալ գիտակցություն ունեցող հիվանդի ստամոքսը,
- վերցնել ստամոքի լվացման ջրերը հետազոտման համար,
- աշխատել նշանակման թերթիկի հետ,
- ձևակերպել լաբորատոր և գործիքային հետազոտությունների ուղարկման ուղեգրերը,
- հավաքել խորիւր ընդհանուր անալիզի, Նիչեպորենկոյի, Ջինիցկու, գլուկոզայի, դիաստազայի և բակտերիոլոգիական հետազոտության համար,
- հավաքել մեզը ընդհանուր և բակտերիոլոգիական հետազոտության համար,
- վերցնել նյութ կոպորոլոգիական հետազոտության, թաքնված արյան նկատմամբ, հելմիտների ձևերի, բակտերիոլոգիական հետազոտության համար,
- կենսաբանական նյութերը տանել լաբորատորիա,
- բաժանել էնտերալ կիրառման դեղորայքային միջոցներ,

- ուսուցանել հիվանդներին տարբեր դեղորայքային միջոցների կիրառման կանոնները,
- նախապատրաստել հիվանդներին աղեստամոքսային և միզասեռական համակարգի ռենտգենոլոգիական և էնդոսկոպիկ հետազոտությունների անցկացման համար,
- հիվանդին պատրաստել գերձայնային հետազոտության,
- իրագործել քույրական պրոցեսի էտապները և նրանց փաստաթղթային ձևակերպումը,
- արձանագրել կենսաբանական մահը և վարվել դիակի հետ:

**Տիրապետի**

- բուժհաստատության բուժական և ախտորոշիչ շենքերի սանիտարական մշակման մեթոդին,
- հիվանդի օրգանիզմի վրա ֆիզիկական ազդման պարզագույն մեթոդներին,
- տարբեր օրգանների և համակարգերի հիվանդություններով հիվանդների խնամքի մեթոդներին,
- ծանր և ազոնալ հիվանդների խնամքի առանձնահատկություններին:

N	ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	
	Բաժնի անվանումը	Բաժնի բովանդակությունը
1.	Բուժհիմնարկների աշխատանքի կազմակերպում	<ul style="list-style-type: none"> <li>- Հիվանդանոցի ընդունարանի և թերապևտիկ բաժնի սարքավորումները, հագեցվածությունը և ռեժիմը:</li> <li>- Հիվանդի սանիտարական մշակում (լրիվ, մասնակի):</li> <li>- Հիվանդի մշակումը ոջլոտության հայտնաբերման դեպքում:</li> <li>- Հիվանդների տեղափոխումը:</li> <li>- Բուժքրոջ պոստի աշխատանքի կազմակերպումը:</li> <li>- Հերթապահության ընդունում և հանձնում:</li> <li>- Բուժհիմնարկի սանիտարահամաձարակաբանական ռեժիմը:</li> </ul>
2.	Հիվանդի անձնական հիգիենան և սնուցումը, մարմնի ջերմաստիճանը և նրա չափումը	<ul style="list-style-type: none"> <li>- Բուժական սնունդ, դիետիկ սեղաններ:</li> <li>- Ծանր հիվանդների կերակրումը,</li> <li>- Ջերմաչափերի դեզինֆեկցիան և պահպանումը:</li> <li>- Ջերմաթերթիկի լրացում:</li> <li>- Ջերմոդ հիվանդների խնամքը:</li> </ul>

3.	Պարզագույն ֆիզիոթերապևտիկ մանիպուլյացիաներ	<ul style="list-style-type: none"> <li>- Բանկաների, թրջոցների, մանանեխի ծեփուկների դնումը:</li> <li>- Ջեռակների և սառցե պարկի օգտագործումը:</li> <li>- Հոգնանների կատարում:</li> </ul>
----	--	--

		<ul style="list-style-type: none"> <li>– Հիվանդների հսկողության մանիպուլյացիաների ժամանակ և անհրաժեշտության դեպքում անհետաձգելի օգնության ցուցաբերումը:</li> </ul>
4.	Դեղորայքային միջոցների կիրառման տարբերակները	<ul style="list-style-type: none"> <li>– Բաժանմունքում «A» և «B» խմբի դեղորայքների, արտաքին օգտագործման, ներերակային, պարէնտերալ կիրառման միջոցների պահպանումը:</li> <li>– Էնտերալ կիրառման պրեպարատների բաժանումը:</li> <li>– Ենթամաշկային և միջմկանային ներարկումների կատարում:</li> </ul>
5.	Հիվանդների հսկողությունը և խնամքը	<ul style="list-style-type: none"> <li>– Շնչառության և անոթագարկի հաշվում:</li> <li>– ՋՃ չափում:</li> <li>– Թթվածնաբուժում:</li> <li>– Խորիսի, մեզի, կղանքի վերցնելը հետազոտությունների համար և դրանք լաբորատորիա ուղարկելը:</li> <li>– Հիվանդների նախապատրաստումը մարտոդական օրգանների և երիկամների ռենտգենաբանական, էնդոսկոպիկ և գերձայնային հետազոտությունների համար:</li> <li>– Տարեց և ծեր հիվանդների խնամքի առանձնահատկությունները:</li> </ul>
6.	Ծանր և մահամերձ հիվանդների խնամքը	<ul style="list-style-type: none"> <li>– Պառկելախոցերի կանխարգելումը:</li> <li>– Բերանի խոռոչի խնամքը:</li> <li>– Անգիտակից հիվանդների խնամքը:</li> <li>– Անհատական պոստի հագեցվածությունը և աշխատանքը:</li> </ul>